

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2012 թվականի N 314-Ա

### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՈՒՄԲ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 2007 թվականի հուլիսի 18-ի ՆՀ-174-Ն հրամանագրի 1-ին կետով սահմանված կարգի 121-րդ կետի 2-րդ ենթակետը և «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերը վարձակալության տրամադրելու մասին պայմանագրի վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու նպատակով ստեղծել աշխատանքային խումբ և հաստատել դրա անհատական կազմը՝ համաձայն հավելվածի:

Հայաստանի Հանրապետության  
վարչապետ

S. Սարգսյան

2012 թ. ապրիլի 10  
Երևան

Հավելված  
ՀՀ վարչապետի 2012 թ.  
ապրիլի 10-ի N 314-Ա  
դրոշման

### Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Ձ Մ

#### ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԻ

- Ա. Ալեքսանյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ (աշխատանքային խմբի ղեկավար)
- Ծ. Գալստյան - ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության աշխատակազմի փոստի վարչության պետի տեղակալ
- Կ. Հակոբյան - ՀՀ արդարադատության նախարարության աշխատակազմի օրենսդրության վերլուծության և կատարելագործման վարչության պետ
- Ա. Մելիք-Իսրայելյան - ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության աշխատակազմի պետական բաժնեմասի կառավարման վարչության պետ
- Ա. Սարգսյան - ՀՀ կենտրոնական բանկի աշխատակազմի ֆինանսական վերահսկողության վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ)
- Հ. Դավթյան - ՀՀ ֆինանսների նախարարի խորհրդական
- Ա. Հարությունյան - ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության առաջատար մասնագետ
- Հ. Մալխասյան - ՀՀ կառավարության աշխատակազմի իրավաբանական վարչության փորձագետ

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան